



ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ



ԱՅԾԻ ԹԱՂՈՒՄԸ



891.715

Ա-54

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ

1939

- 8 FEB 2013

2392

U-54

Uy

- 6 NOV 2011

1.

Լինում են, չեն լինում, մի ծերունի ու մի
պառավ են լինում:

Նրանց ունեցած-չունեցածը միայն մի այժ և
լինում:

Մի նր ծերուկը գնում է անտառ, վոր արեխ
գործելու համար ծառերից կեղև պոկի, այժն ել
հետը գնում է:

Անտառում ծերուկն սկսում է կեղև պոկել,
այժն ել սկսում է արածել:

Մին ել այժն սկսում է փորել-փորփրել: Գուրս
և գալիս մի կճուճ, մեջը լիքը վոսկի:

Ծերուկն այս վոր տեսնում է, շատ է ուրա-
խանում: Կեղևները դեն է զցում, վոսկիները
հավաքում ու գալիս տուն:

Այժն ել նրա յետևից:

Գալիս է տուն, վոսկիները պտռավին ցույց
և տալիս և յեղելությունը պտռում:



— Այ մարդ, աստված ե մեզ այդ վոսկիները տվել, վոր մենք որ ծերության սոված չմնանք, — ուրախանում ե պառավը:

— Վրչ, պառավ, այծն ե գտել այդ վոսկիները: Այսուհետեւ այծին շատ լավ պետք ե պահենք: Յեվ մարդ ու կին սկսում են լավ ապրել, և այծին լավ կերակրել:

2.

Մի առ ժամանակ անցնելուց հետո, այծը հիվանդանում ե ու սատկում: Ծերուկն ու պառավը շատ են տխրում:

Ծերուկն ասում ե.

Գիտե՞ս ինչ, պառավ: Ուզում եմ զնամ տերտերին խնդրեմ, վոր գա մեր այծին մի լավ առոք-փառոք թաղի, վոր նրա լավությունից չուրս գանք:

Պառավը համաձայնվում ե:

— Որհնյա տեր,—գլուխ և ապիս ծերուկը,
տերտերի տունը մտնելով:

— Աստված որհնեսցե, վորդի: Ի՞նչ կա.

— Մեր տանը դժբախտութիւն և պատանել:
Մեռել ունենք: Ուղում եմ գամ՝ թաղում կառա-
րես:

— Ո՞վ և մեռել, կի՞նդ:

— Վոչ, կինս չի: Մեր աչծն և մեռել:

— Անաստված, բա այժին ել կթաղեն,—
բարկանում և տերտերը, ծերուկի մրքից բռնում
և սկսում է քաշքշել:

— Դու ինձ վրա մի՛ բարկանա, տեր հօյր, —
խնդրում և ծերուկը, — այն ուրիշ տեսակ այժ եր,
խակական քրեատոնչա լեր: Քեզ ել լերկու հար-
չուր մանեթ և կտակել: Ահա:

— Դե լես նրա համար չբարկացա, վոր աչծին
չի կարելի թաղել: Նրա համար բարկացա, վոր
այդ մասին ուշ ես հայտնում: Դե, գնա տի-
րացվին ասա, վոր դա, գնանք թաղենք,—ասաց
տերտերը լերկու հարչուր մանեթը զրպանը գնե-
լուց հետո:



Ծերուկը վեր կացավ գնաց տիրացվի մոտ:
— Բարի ուր, տիրացու: Մեռել ունենք, ուզում
եմ, վոր գաս թաղում կատարես, — ասաց ծերու-
կը տիրացվին:

— Ո՞վ ե մեռել:

Մեր այծը, տիրացու:

— Անաստված, անկրոն, մի՞թե այծին թաղում
են, — բարկացավ տիրացուն և ծերուկին՝ տո՛ւր,
թե կտաս, տո՛ւր թե կտաս:

— Դու իզուր ես ինձ ծեծում, տիրացու: Այծն
ուրիշ տեսակ այծ եր, քրիստոնյա այծ եր: Գեղ
ել հարյուր մանեթ ե կտակել: Ահա:

Փողի անունը վոր լսեց, տիրացուն կակղեց:

— Հեր ողհնած, յես հո նրա համար չեմ ծե-
ծում, վոր այծին թաղել չի կարելի: Յես նրա
համար եմ բարկանում, վոր ուշ ես հայտնում:
Գնանք:

Տերտերն ու տիրացուն յեկան ծերուկի տունը,
այծին դրին դագաղի մեջ, հողեհանգիստ կատա-
րեցին, հետո յել տարան գերեզմանատուն և ա-
ռոք-փառոք թաղում կատարեցին:



Լուր հասավ յեպիսկոպոսին թե տերտերն այժ
ե թաղել:

Մաքդ ուղարկեց, տերտերին ու ծերուկին իր
մոտ կանչեց:

— Անիծյալ լինեք, անատովածներ, ինչպե՞ս
եք համարձակվել այժ թաղել,— զուտց յեպիս-
կոպոսը:

— Սրբազան, մի բարկանա: Ախր այլ այժն
ուրիշ տեսակ այժ եր, իսկական քրիստոնյա յեր:
Քեզ ել հազար մանեթ փող ե կտակել, — ասաց
ծերուկը: Ահա:

Այ որհնյալ, այ փորդի,— ժպտալով պատաս-
խանեց յեպիսկոպոսը,— չես հո նրա համար չեմ
բարկանում փոր այժ թաղել չի կարելի: Յես բար-
կանում եմ նրա համար, թե ինչու ժամանակին
ինձ չեք հայտնել, փոր գոյի ու թաղմանը մաս-
նակցեյի:

Յեպիսկոպոսը հազար մանեթը գրպանը գրեց,
տերտերն ու ծերուկն ել ատուն վերադարձան:

Չերապամեց՝ Հ. Հայրապետյան
Խմբագիր՝ Աշ. Սարգսյան

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան

Նկարները՝ Մ. Ալանվերդյանի

Հիտոգրաֆիայի նկարիչ՝ Ա. Մխիթարյան

Սրբադրէ՛ Ս. Փարսադանյան



<< Ազգային գրադարան



NL0387453

Գլավիլիտի լրագոր՝ Ե—2337. Հրատ. № 4890

Պատվեր 375. Տիրաժ 3000

Հանձնված ե արտադրության 16 ապրիլի 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար 5 մայիսի 1939 թ.

Պատրաստի 1 տպարան, Յերեան, Հենինի 65

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

2542

ПОХОРОНЫ КОЗЛА

ГИЗ. Арм. ССР, Ереван, 1939